

ԾՐԱԳԻՐ



«Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն»

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը մասնակցել է Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող և Ավստրիական զարգացման գործակալության (ԱԶԳ) կողմից համաֆինանսավորվող և իրականացվող «Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն» (ՕԳԱՆ) ծրագրի շրջանակում, փոքր ֆերմերների և ֆերմերային խմբերի ծրագրերի ներկայացմանը:

Մրցույթին ներկայացվել էր 130 ծրագիր, որոնցից արդյունքում հաստատվել էր 28 հայտադիմում: «Օրգանական գյուղատնտեսությունը Հայաստանում մեծ ներուժ ունեցող ուղղություն է և ընդգրկված է գյուղատնտեսության ռազմավարական ծրագրի մեջ: Ամբողջ աշխարհում ներկայումս առկա է օրգանական արտադրանքի մեծ պահանջարկ, և այս ոլորտի ճիշտ կազմակերպման, կայուն որակի և քանակի ապահովման դեպքում հնարավոր է ապահովել հայկական արտադրանքի մրցունակությունն արտասահմանյան շուկայում», - ողջունելով հյուրերին՝ Նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը:

Միջոցառման ընթացքում քննարկվել է նաև Նյուրնբերգում կայանալիք Օրգանական սննդամթերքի ցուցահանդեսին հայկական արտադրանքը ներկայացնելու հնարավորությունը:

Ավստրիական զարգացման գործակալության ՕԳԱՆ ծրագրի ղեկավար Դեյվիդ Մուբենհուբերն իր ելույթում ընդգծել է, արդեն 8 տարի իրականացվող ծրագիրն ընթանում է բավական արդյունավետ. եթե 2014 թվականին առկա էին 17 հավաստագրված ընկերություններ, ապա այժմ դրանց քանակը կրկնապատկվել է: ՕԳԱՆ ծրագրի ղեկավարն ընդգծել է, որ իրենց ուշադրության կենտրոնում է լինելու հանրային իրազեկման աշխատանքների իրականացումը, քանի որ հանրության միայն 20 տոկոսն է տեղյակ օրգանիկ արտադրանքի և դրա առավելությունների վերաբերյալ: Այս տարվա ընթացքում հանրային իրազեկման տարբեր գործիքների կիրառման շնորհիվ, նախատեսվում է շուրջ 15 տոկոսով բարձրացնել հայաստանյան սպառողների տեղեկացվածության մակարդակը:

👉 2

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

Բեռլինում կայացել է գյուղատնտեսության նախարարների 9-րդ համաժողովը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը, Գերմանիայի Դաշնային Հանրապետության պարենի և գյուղատնտեսության նախարարի հրավերով Բեռլին կատարած եռօրյա այցի շրջանակում, մասնակցել է «Գյուղատնտեսությունը և ջուրը՝ բանալի աշխարհը սնուցելու համար» խորագրով գյուղատնտեսության նախարարների 9-րդ համաժողովին, «Բեռլինյան կառաջ շաբաթ» գյուղատնտեսական միջազգային ամենամյա ցուցահանդեսին, ինչպես նաև ունեցել մի շարք հանդիպումներ:

Հունվարի 21-ին տեղի ունեցած գյուղատնտեսության նախարարների 9-րդ համաժողովի մասնակիցները, որոնց կազմում էին աշխարհի ավելի քան 80 երկրների գյուղատնտեսության նախարարներ, անդրադարձել են գյուղատնտեսության բնագավառում ջրի կայուն օգտագործման և կառավարման խնդրին, կարևորվել են նաև ջրի հասանելիության, խնայողատար տեխնոլոգիաների կիրառման, սուբսիդավորման նվազեցման հարցերը: Համաժողովի արդյունքում գյուղատնտեսության նախարարների կողմից ընդունվել է համատեղ կոմյունիկե և կոչ է արվել մասնակիցներին՝ ազգային մակարդակներում իրագործել առաջարկված գործողությունները:

Ֆորումի շրջանակներում, կայացել են Իգնատի Առաքելյանի հանդիպումները Լիտվայի գյուղատնտեսության նախարար Բրոնիուս Մարկաուսկասի, Սլովենիայի գյուղատնտեսության նախարար Դեջան Ժիդանի և Վրաստանի գյուղատնտեսության նախարար Լևան Դավիթաշվիլիի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են միջպետական հարաբերությունների և գյուղատնտեսության ոլորտում համագործակցության զարգացմանն առնչվող հարցեր:

👉 2

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Վարչապետ Կարեն Կարապետյանի մոտ շահագրգիռ գերատեսչությունների ղեկավարների մասնակցությամբ տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել են Գեղարքունիքի մարզից ներկայացված ներդրումային ծրագրերի փաթեթները՝ վարչապետի մարզային այցի շրջանակում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն: Մանրամասն անդրադարձ է կատարվել ներկայացված բիզնես ծրագրերից յուրաքանչյուրին, որոնք վերաբերում են պանրագործության, կաթնամթերքի, գյուղմթերքի արտադրության ընդլայնմանն ու զարգացմանը, ինչպես նաև առանձին բիզնես ծրագրերում արտաքին ներդրողների ներգրավմանը:

Կարևորելով մարզերում ներդրումային ծրագրերի խթանումն ու իրականացումը՝ վարչապետը Նշել է, որ կառավարությունը համաֆինանսավորելու և աջակցություն է ցուցաբերելու այն ծրագրերին, որոնք հեռանկարային են, ունեն տնտեսական հիմնավորում, գնահատված ռիսկեր, կարող են դառնալ արդյունավետ բիզնես՝ ստեղծելով սոր աշխատատեղեր և ապահովելով մուլտիպլիկատիվ էֆեկտ:

Ամփոփելով քննարկման արդյունքները՝ Կարեն Կարապետյանը հանձնարարել է Գյուղատնտեսության, Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություններին և առաջարկել Կենտրոնական բանկին՝ հավանության արժանացած ծրագրերի իրականացմանը համապատասխան ընթացք տալու նպատակով, դիտարկել իրենց կառույցների միջոցով օժանդակություն ցուցաբերելու հնարավորությունը:

Առաջարկվել է նաև Կենտրոնական բանկի մասնակցությամբ ստեղծել հարթակ՝ գործարարների համար բիզնես դասընթացներ և ուսումնական ծրագրեր իրականացնելու նպատակով, ինչը կնպաստի ներդրումային ծրագրերի ավելի հիմնավոր և արդյունավետ կազմմանը: Հաջորդիվ կառավարությունում քննարկվելու են նաև մյուս մարզերից ստացված ծրագրային փաթեթները:

Վարչապետ Կարեն Կարապետյանի գլխավորությամբ կառավարությունում վերջերս տեղի է ունեցել խորհրդակցություն՝ Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների օգտագործման խնդիրների վերաբերյալ: Նշենք, որ ՀՀ կառավարության՝ 2016 թ. դեկտեմբերի 15-ի նիստում վարչապետ Կարեն Կարապետյանը ՀՀ բնապահպանության նախարարին հանձնարարել էր՝ մեկամսյա ժամկետում ուսումնասիրել և ներկայացնել տեղեկատվություն՝ ՀՀ-ում առանց ջրօգտագործման թույլտվության գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբեկտների վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել առաջարկություններ ապօրինի ջրօգտագործումը բացառելու ուղղությամբ:

Բնապահպանական պետական տեսչություն ջրօգտագործողների ուղարկած հաշվետվությունների և ջրավազանային կառավարման մարմինների կողմից իրականացված դիտարկումների հիման վրա արձանագրվել է, որ առանց ջրօգտագործման թույլտվության գործունեություն է իրականացնում շուրջ 574 տնտեսվարող սուբյեկտ: Վարչապետին տեղեկատվություն է ներկայացվել Արարատյան դաշտում, ըստ ոլորտների (խմելու-կենցաղային, գյուղատնտեսական, արդյունաբերական, ձկնաբուծական) ստորերկրյա ջրերի փաստացի օգտագործման, գերօգտագործման ազդեցության գնահատման, ստեղծված բնապահպանական իրավիճակի, շահագործվող հորատանցքերի փաստացի ծախսի, ջրօգտագործման թույլտվությունների և ձկնաբուծարանների գործունեության վերաբերյալ: Անդրադառնալով գերօգտագործման հետևանքներին՝ ՀՀ բնապահպանության փոխնախարար Խ. Հակոբյանը Նշել է, որ մոտավորապես 205 հորատանցքեր դադարել են շատրվանել, և 2016 թ. դրությամբ Սևջուր գետի ակունքների աղբյուրների որոշ խմբեր անհետացել են, ինչի հետևանքով զգալիորեն կրճատվել է Հայաստանի ջրառատ գետերից մեկի՝ Սևջուր գետի սնումն ակունքում, Էականորեն կրճատվել է Ակնա լճի մակերեսը և բնական ելքը:

👉 2

Կոոպերացիա	Էջ 4
Գործարար կանայք	Էջ 5
Մասնագետի խորհուրդը	Էջ 6

ԾՐԱԳԻՐ

«Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն»

1

Միջոցառման ընթացքում ծրագրի շահառուները համառոտ ներկայացրել են իրենց ծրագրերը, որոնք, մասնավորապես, վերաբերում են մեղրի, չրերի (այդ թվում՝ թզի և արքայանարինջի չրերի) արտադրությանը, լոբու, ելակի և այլ մշակաբույսերի աճեցմանը, պարարտանյութերի արտադրությանը, վայրի խոտաբույսերի հավաքին և այլն։ ՕԳԱՆ ծրագրի նպատակն է զարգացնել Հայաստանում օրգանական գյուղատնտեսությունը։ Այն կնպաստի տեղական և միջազգային շուկաներում հայկական օրգանական մթերքի հաջող իրացմանը՝ բարելավելով իրավական և օրենսդրական դաշտը և տրամադրելով համապարփակ մարքեթինգային աջակցություն։

Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնությունը ծրագիրը նպաստում է նաև հայ ֆերմերների ու վերամշակողների, ինչպես նաև հայ գնորդների և շահագրգիռ եվրոպական և այլ միջազգային ընկերությունների միջև կապերի հաստատմանը։ Բացի այդ, հայ օրգանական մթերք արտադրողները հնարավորություն են ստանում մասնակցել միջազգային օրգանական տոնավաճառներին։

Փոքր ֆերմերների և ֆերմերային խմբերի համար նախատեսված հավելյալ աջակցության ծրագրի նպատակն է՝ խրախուսել և աջակցել փոքր ֆերմերներին և փոքրածավալ վերամշակողներին ավանդականից անցում կատարել օրգանական գյուղատնտեսության կամ զարգացնել իրենց՝ արդեն իսկ գոյություն ունեցող օրգանական արտադրության և վերամշակման կարողությունները։

Նախաձեռնության շրջանակում փոքր ֆերմերներին և փոքրածավալ գյուղատնտեսական մթերք վերամշակողներին կտրամադրվեն գյուղատնտեսական ներդրանքներ, առաջնային անհրաժեշտության սարքավորումներ և գործիքներ, ինչպես նաև կտրամադրվի կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման դասընթացների և խորհրդատվության հնարավորություններ։ Յուրաքանչյուր ընտրված դիմորդին տրամադրվող գյուղատնտեսական ներդրանքների և հիմնական սարքավորումների դրամական արժեքը չի կարող գերազանցել 10.000 եվրոն։

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

Բեռլինում կայացել է գյուղատնտեսության նախարարների 9-րդ համաժողովը

1

ՀՀ գյուղատնտեսության նախարարը հանդիպել է նաև ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության գլխավոր տնօրեն Գրացիանո դա Սիլվայի հետ, որի ընթացքում քննարկվել են Հայաստանում ՊԳԿ-ի կողմից իրականացվող և առաջիկա ծրագրերին առնչվող հարցեր։

Իգնատի Առաքելյանը հանդիպում է ունեցել ԳԴՀ պարենի և գյուղատնտեսության նախարարի խորհրդարանական պետքարտուղար Պետեր Բլեզերի հետ։ Հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցության զարգացմանն առնչվող հարցեր։ Պետեր Բլեզերը նշել է, որ հունիսին պատրաստվում է այցելել Հայաստան՝ տեղում ծանոթանալու երկու երկրների միջև գործակցության առկա հնարավորություններին։

Հանդիպումներ են կայացել գյուղատնտեսական տեխնիկայի և գործիքների արտադրությամբ մասնագիտացած «ԿԼԱՍՍ», «Ջոն Դիր» և «Գրիմմե» գերմանական ընկերությունների ներկայացուցիչների հետ։ ՀՀ գյուղատնտեսության նախարարի կողմից ներկայացվել է ծրագրային առաջարկ Հայաստանի գյուղտեխնիկայի վերագինման և արդիականացման վերաբերյալ։

Այցի շրջանակում Իգնատի Առաքելյանը հանդիպել է նաև Գերմանիայի «Վայիենշտեֆան» Տրիսդորֆի գյուղատնտեսական համալսարանի միջազգային կառավարման ֆակուլտետի ղեկան, պրոֆեսոր Քոհանսեն Յոլցերի հետ, ինչպես նաև մասնակցել է «Բեռլինյան կանաչ շաբաթ» գյուղատնտեսական միջազգային ամենամյա ցուցահանդեսի պաշտոնական բացման արարողությանը, որտեղ առանձին տաղավարով «Անիլենդ» կազմակերպության կողմից ցուցադրվել են նաև հայկական արտադրության կոնյակը և գինիները։

ՊԱՇՏՈՆԱԿՆ

1

2013-2014 թթ. վտանգվել է 29 համայնքի՝ մոտ 8000 հա հողատարածքների ոռոգումը, 2014 թ. Սևանա լճից օրենքով նախատեսված ծավալից ավելի շատ ջուր է բաց թողնվել, 2013-2014 թթ. կատարվել են լրացուցիչ ծախսեր ՀՀ պետական բյուջեից և այլ աղբյուրներից։ Նշվել է նաև, որ ապօրինի ջրօգտագործումը բացառելու նպատակով, կատարվել են մի շարք աշխատանքներ. մասնավորապես, 2014 թ. առ այսօր Արարատյան դաշտում լուծարվել են 56, կոնսերվացվել՝ 63 և փականային ռեժիմի բերվել՝ 330 ինքնաշատրվանող խորքային հորեր, ինչի արդյունքում խնայված ջրաքանակը կազմել է շուրջ 28808,8 լ/վրկ։

Ներկայացվել են նաև ջրային ռեսուրսների կայուն կառավարման առաջարկություններ, որոնք վե-

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Համատեղ ծրագրեր և համագործակցության հետագա հեռանկարներ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն ա ընդունել է ՀՀ-ում Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Յոհաննես Դաուդային (նստավայրը՝ Թբիլիսի)։ Հանդիպման նպատակն էր՝ քննարկել հայ-հոլանդական համատեղ ծրագրերն ու հետագա համագործակցության հեռանկարները։

Բարձր գնահատելով գյուղատնտեսության ոլորտում Հայաստանում առկա ներուժը՝ դեսպան Յոհաննես Դաուդան հայտնել է հոլանդական կողմի պատրաստակամությունն աջակցություն ցուցաբերել այն առավել արդյունավետ իրացնելու գործում։ Միևնույն ժամանակ Հայաստանում ագրարային ոլորտի հետագա զարգացման հարցում դեսպանը հնարավոր է համարել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) ֆինանսական միջոցների ներգրավումը։ Հանդիպմանը դեսպան Դաուդան նախարար Իգնատի Առաքելյանին է ներկայացրել առաջարկություններ կարկուտի հետևանքների վերացման մեխանիզմների վերաբերյալ, որոնք նախարարը խոստացել է ուսումնասիրել։

Անդրադառնալով երկկողմ փոխգործակցության առավել հեռանկարային ուղղություններին՝ կողմերը հատուկ անդադարձ են կատարել կարտոֆիլագործության զարգացմանը՝ այդ համատեքստում հատկապես կարևորելով կարտոֆիլի պահեստավորման և վերամշակման նպատակով ներդրումների իրականացումն ու այս ուղղությամբ համատեղ ծրագրերի նախաձեռնումը։ Քննարկվել են նաև Հայաստանում գյուղատնտեսական տեխնիկայի վերագինմանն առնչվող խնդիրներ։ Նախարար Իգնատի Առաքելյանը վստահություն է հայտնել, որ գյուղտեխնիկայի արդիականացումը հիմք կստեղծի ագրարային բնագավառի հետագա զարգացման համար և թույլ կտա ոլորտը դարձնել ավելի շահութաբեր։ Կողմերը մտքեր են փոխանակել նաև գյուղատնտեսական կենդանիների սնուցման, ինչպես նաև երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցերի շուրջ։

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն ընդունել է նաև Հայաստանում Կանադայի արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Զյուրի գլխավորած պատվիրակությանը։

Հանդիպման սկզբում դեսպան Զյուրին ընդգծել է, որ համագործակցությունը գյուղատնտեսության

ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Սեղմ ժամկետում մարել գյուղացիական տնտեսություններին ունեցած պարտքերը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը վերջերս հրավիրել էր խորհրդակցություն՝ խաղող և պտուղ-բանջարեղեն արտադրող մի շարք վերամշակող ընկերությունների մասնակցությամբ՝ մթերումների կազմակերպմանն ու պարտքերի վճարումներին առնչվող խնդիրների քննարկման նպատակով։ «Սեր հիմնական մտահոգությունն է, որպեսզի գյուղացու հոգալ լինի միայն որակով գյուղմթերք արտադրելը, և նա վստահ լինի, որ մթերքի իրացման խնդիր չի ունենալու, հակառակ պարագայում կվտակվե՞նք գյուղատնտեսության զարգացումը՝ հենդլթագ արձանագրելով», - իր խոսքում նշել է նախարար Առաքելյանը։

Անդրադառնալով նախորդ տարիներին կատարված մթերումների դիմաց չկատարված պարտավորությունների խնդրին՝ գյուղատնտեսության նախարարը հորդորել է վերամշակողներին՝ հնարավորինս սեղմ ժամկետում մարել գյուղացիական տնտեսություններին ունեցած պարտքերը։

Ընդհանուր առմամբ, վերամշակող ընկերությունները 2016 թվականին գյուղացիական տնտեսությունների հանդեպ ունեն 1505.6 մլն դրամի ֆինանսական պարտավորություն, իսկ 2015 թվականի մթերումների դիմաց պարտքը կազմում է 105.6 մլն դրամ։ Վերամշակող ընկերությունների ներկայացուցիչները նշել են, որ կազմել են մարման ժամանակացույցներ, որոնց համաձայն կիրականացվեն մարումները։ Միևնույն ժամանակ բարձրացվել են մի շարք հարցեր, որոնք մասնավորապես վերաբերել են ակցիզային դրոշմանիշերի տրամադրման, պատրաստի արտադրանքի իրացման և այլ խնդիրների։

Նախարարը հավաստիացրել է, որ բարձրացված խնդիրները կքննարկվեն պատկան մարմինների հետ՝ հնարավոր լուծման ուղիներ գտնելու նպատակով։

րաբերում էին, մասնավորապես, ջրօգտագործման համակարգում էներգախնայող և ջրախնայող տեխնոլոգիաների ներդրմանը, օրենսդրական, ինստիտուցիոնալ և դաշտային միջոցառումների անցկացմանը, նոր հորատանցքերի թույլտվությունների տրամադրման բացառմանը, լքված հորերի փակմանը և վերահսկողության համակարգի ներդրմանը և այլն։

Կառավարության ղեկավարն անհրաժեշտ է համարել բնապահպանական վտանգավոր իրավիճակի բարելավմանը և ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված լուրջ քայլերի ձեռնարկումը՝ հանձնարարելով ստեղծել շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խումբ։

բնագավառում հայ-կանադական հարաբերությունների առաջնային ուղղություններից է, և կանադական կողմը մտադիր է ակտիվացնել գործարար կապերը Հայաստանում։ Նշելով, որ այս տարի լրանում է ՀՀ-ի և Կանադայի միջև դիվանագիտական հարաբերությունների 25-ամյակը՝ դեսպանը տեղեկացրել է, որ ընթացիկ տարում նախատեսվում է Հայաստանում իրականացնել մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ նաև գյուղատնտեսության ոլորտում։ Այդ նպատակով Ջոն Զյուրն առաջարկել է Կանադայի անասնաբուժության գենետիկ ասոցիացիայի, Կանադայի խոզի մսի և Կանադայի անասնակերի և արոտավայրերի ասոցիացիայի և Հայաստանի Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնի (CARD) միջև փոխըմբռնման հուշագիրը ստորագրել մարտ ամսին՝ Երևանում։

Հուշագրի ստորագրումից բացի, նախատեսվում է նաև կանադացի գործարարների այց Հայաստան։ Միաժամանակ դեսպանը հավելել է, որ կանադական կողմը նպատակադրված է կազմակերպել նաև հայ բիզնեսմենների այցը Կանադա՝ տեղում գյուղատնտեսության բնագավառում երկրի փորձը ուսումնասիրելու և գործարար կապեր հաստատելու նպատակով։

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն իր գոհունակությունն է հայտնել երկու երկրների միջև ագրոպարենային համալիրում ձևավորված սերտ համագործակցության առթիվ։ Երկկողմ համագործակցությունն ավելի ամուր հիմքերի վրա դնելու նպատակով, նախարարն առաջարկել է քննարկել համատեղ ձեռնարկությունների ստեղծման հնարավորությունը՝ պատրաստի արտադրանքը հետագայում ԵՏՄ երկրներ արտահանելու հեռանկարով։

Անդրադառնալով գյուղատնտեսության բնագավառում Կանադայի հետ համագործակցության առավել հեռանկարային ճյուղերին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարը, մատնանշել է տավարաբուծության և խոզաբուծության ոլորտները։ Կարևորելով Կանադայում մասնագիտացված ճյուղային խորհուրդների մեծ ազդեցությունը մասնավոր հատված-պետություն հարաբերություններում՝ նախարարն ընդգծել է, որ այս հարցում կանադական փորձն ուսանելի է Հայաստանի համար և հայկական կողմը կուսումնասիրի դրա տեղայնացման հնարավորությունը Հայաստանում։

Հանդիպման ընթացքում դեսպան Ջոն Զյուրն առաջարկել է Իգնատի Առաքելյանին այցելել Կանադա՝ իր գործընկերոջ հետ հանդիպելու և փոխգործակցության շրջանակների ընդլայնման նպատակով։

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

Ավելացնել արտադրության ծավալները

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն այցելել է Կոտայքի մարզում գործող մի շարք ջերմոցային տնտեսություններ: Նախարարի առաջին կանգառը Գողթ համայնքում էր, որտեղ նա այցելել է «Էկոտոմատո» ՓԲԸ և «Արմյանսկիյ Ուրաժայ» ՍՊԸ:

«Էկոտոմատո» ընկերությունը վարդի արտադրության ծավալներով աշխարհի խոշորագույն հինգ ընկերություններից մեկն է, ջերմոցները հագեցած են հողանդական նորագույն տեխնոլոգիական սարքավորումներով ու ավտոմատացված կառավարման համակարգերով:



Հիմնադիր Մարկոս Ղարիբյանի խոսքով՝ նպատակ ունեն ընդլայնել ջերմատնային տնտեսությունների տարածքը ևս 15 հեկտարով, որի շնորհիվ ընկերությունը կարող է դառնալ վարդեր աճեցնող աշխարհի ամենախոշոր ջերմատնունը: Բացի այդ, ջերմատն տարածքի ընդլայնումը հնարավորություն կտա վարդերի ինքնարժեքը նվազեցնել մոտ 20-22 տոկոսով և կրկնապատկել արտահանման ծավալները:

Անդրադառնալով գազի սակագնի իջեցմանը՝ նա նշել է, որ դա անակնկալ էր իրենց համար, քանի որ էներգակիրները կազմում են իրենց արտադրանքի ինքնարժեքի մոտ 50 տոկոսը, ուստի այն ևս կնպաստի վարդերի ինքնարժեքի նվազմանը մոտ 5-6 տոկոսով: Նշելով, որ «Էկոտոմատո» ընկերությունում 2016 թվականին աճեցվել է մոտավոր հաշվարկներով 19 մլն վարդ՝ Մարկոս Ղարիբյանը ավելացրել է, որ ընթացիկ տարում ակնկալում է ավելացնել այդ ցուցանիշը: Նրա խոսքով՝ արտադրանքի 70-80 տոկոսն արտահանվում է Ռուսաստանի Դաշնություն, Բելառուս և Վրաստան, իսկ մնացածը սպառվում է ներքին շուկայում: Այժմ քայլեր են ձեռնարկվում արտահանումները հողանդական և ֆրանսիական շուկաներ վերսկսելու ուղղությամբ:

Այնուհետև նախարարն այցելել է Արամուսում գտնվող միջին հզորության ջերմատնին, գրուցել հիմնադիր Սամվել Թևոսյանի և Քաջիկ Հակոբյանի հետ, ծանոթացել նրանց հուզող խնդիրներին:

Այցի շրջանակում նախարար Իգնատի Առաքելյանը եղել է նաև Նոր Գեղի համայնքում գտնվող «Պողոթն ագրո» ընկերությունում, որի հիմնադիր Սամվել Կարապետյանը նշել է, որ ընկերության արտադրանքի մոտ 90 տոկոսն արտահանվում է Ռուսաստանի Դաշնություն: Լոյիկի բերքատվությունն այստեղ կազմում է 51-52 կգ/մ², համախառն բերքը տարեկան կազմում է շուրջ 1900 տոննա: Ջերմատնանը լոյիկի մշակությունն իրականացվում է հիդրոպոնիկ եղանակով: Նախատեսվում է մինչև տարեկան գործարկել ևս 12,2 հա ջերմատնին:

Ամփոփելով այցի արդյունքները՝ նախարար Իգնատի Առաքելյանը նշել է, որ այցի հիմնական նպատակն էր՝ ծանոթանալ մի շարք խոշոր և միջին ջերմոցային տնտեսություններում առկա խնդիրներին և ընկերությունների ղեկավարների հետ քննարկել գազի սակագնի նվազեցման հնարավոր արդյունքները: «Հունվարի 1-ից գազի սակագնի նվազեցումը, բնականաբար, դրական ազդեցություն կունենա ջերմատնային բիզնեսի վրա, քանի որ կառաջանան ազատ շրջանառու միջոցներ, որոնք կկարողանան ներդնել՝ ոլորտը զարգացնելու համար», - նշել է Իգնատի Առաքելյանը:

Ընդգծելով, որ ջերմոցային տնտեսությունների ոլորտն ամբողջ աշխարհում գյուղատնտեսության բնագավառի ամենաարագ զարգացող և մեծ ներուժ ունեցող ոլորտներից է՝ նախարարը կարևորել է պետության կողմից աջակցության ցուցաբերումը: Նախարարը կարևորել է նաև համապատասխան մասնագետների պատրաստումը, ինչին կնպաստի Համաշխարհային բանկի կողմից Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի հետ ջերմատնների մասնագետների վերապատրաստման դասընթացների կազմակերպումը:

Իր հերթին Հայաստանի ջերմատնային ասոցիացիայի նախագահ Պողոս Գևորգյանը նշել է, որ գազի սակագնի նվազեցումը կնպաստի ջերմոցային տնտեսությունների շահութաբերության բարձրացմանը և չաշխատող ջերմոցների վերագործարկմանը: Նրա խոսքով՝ ստեղծվել է նախաձեռնող խումբ, որը մշակել և կառավարության քննարկմանն է ներկայացնելու ծրագիր, որով նախատեսվում է Հայաստանը վերածել ջերմատնային արդյունաբերական երկրի՝ տեղում համապատասխան սարքավորումներ ու համակարգեր արտադրելու, տեղական սերմն ու տնկանյութը կիրառելու միջոցով, ինչը կնպաստի նաև նոր աշխատատեղերի ստեղծմանը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Համագործակցության հնարավորությունները գյուղոլորտում

ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Արմեն Հարությունյանը հյուրընկալել է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) տնօրենների խորհրդի անդամ, հողանդական խմբի ղեկավար Ֆրանս Վիկերսին՝ գյուղատնտեսության ոլորտում համագործակցության զարգացման հնարավորությունները քննարկելու նպատակով: Հանդիպմանը ներկա էր նաև ՀՀ-ում Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Յոհաննես Դաունան:

Ֆրանս Վիկերսը նշել է, որ ներկայիս պաշտոնում սա իր առաջին այցն է Հայաստան, որը նպատակադրված է ծանոթանալու մեր երկրի տարբեր ոլորտներին, այդ թվում՝ գյուղատնտեսության ոլորտում իրականացվող քաղաքականությանը, զարգացման ուղղություններին և մարտահրավերներին: ՎԶԵԲ ներկայացուցիչը հավելել է, որ բանկը հետաքրքրված է ներդրումներ իրականացնել և վստահելի գործընկերներ գտնել հատկապես սննդի վերամշակման ոլորտում:

Ողջունելով հանդիպման մասնակիցներին՝ Արմեն Հարությունյանը հակիրճ ներկայացրել է ՀՀ գյուղատնտեսության ոլորտում վերջին տարիներին արձանագրված զարգացումները, հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները, կառավարության որդեգրած քաղաքականության և ռազմավարական զարգացման առաջնային ուղղությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ ծավալված համագործակցության արդյունքները: «Գյուղատնտեսությունը մեր երկրում դեռևս ունի զարգացման չիրացված մեծ ներուժ: Մեր հիմնական տեսլականն է՝ խրախուսել և օժանդակել առևտրային և ժամանակակից գյուղատնտեսության գիտելիքահեն զարգացումը, որում առաջնային դերակատարում ունեն նորարարական տեխնոլոգիաները: Այս համատեքստում կառավարությունը կարևորում է հատկապես խոշոր ներդրումային ծրագրերի խրախուսումը, որոնք իրենց հետ բերում են գիտելիք, բարձր տեխնոլոգիաներ, աշխատատեղեր և նոր շուկաներին հասանելիություն», - իր խոսքում մասնավորապես նշել է փոխնախարարը:

Արմեն Հարությունյանն առաջարկել է քննարկել ՎԶԵԲ-ի կողմից ուղիղ ֆինանսավորման գործիքի կիրառման հնարավորությունը՝ հաշվի առնելով Հայաստանում տնտեսավարողների համար մատչելի վարկային ռեսուրսների ներգրավման խնդիրը: Ի պատասխան՝ ՎԶԵԲ տնօրենների խորհրդի անդամ Ֆրանս Վիկերսն առաջարկել է հարցը քննարկել առաջիկայում:

Փոխնախարարը կարևորել է ջերմոցային տնտեսությունների զարգացման, ինտենսիվ այգիների հիմնման, հատապտուղների արդյունաբերության, վերամշակման ոլորտի, այդ թվում՝ կաթնամթերքի արտադրության արդիականացման ուղղությամբ ֆինանսավորումը: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են նաև երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցեր ևս:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Նպատակը՝ պարարտանյութերի շուկայի ձևավորումն է...

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն այցելել է ՀՀ ԳԱԱ «Հայկենսապրոդուկտ» գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ՝ կենտրոնի գործունեությանն ծանոթանալու, գիտական հայտնագործությունները գյուղատնտեսության մեջ կիրառելու հնարավորություններն ու հեռանկարները քննարկելու նպատակով:

Կենտրոնի տնօրեն ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Սադյանը տեղեկացրել է, որ իրենց հիմնական ուղղվածությունը տարբեր կենսապատրաստուկների արտադրությունն է, որոնք կիրառվում են գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության մեջ: Կենտրոնը մասնավորապես առաջարկում է կենսապարարտանյութեր, որոնք փոխարինում են ազոտական պարարտանյութերին և ի տարբերություն վերջինիս՝ օրգանական պարարտացման եղանակ են, արդյունավետությունը շուրջ 25 տոկոսով ավելի բարձր է, առավել մատչելի են, բացի այդ, վերականգնում են հողի միկրոֆլորան՝ նպաստելով բերրիության աճին:

Տարեկան կենտրոնում հնարավոր է արտադրել մոտ 80 տոննա պարարտանյութ: Գիտական կենտրոնի աշխատակիցների հետ հանդիպման ընթացքում Իգնատի Առաքելյանը նշել է, որ նախարարությունը, որը մինչ այս ֆինանսավորել է պարարտանյութերի ներ-

մուծումը, պատրաստ է ազատականացնել շուկան, սակայն պարարտանյութեր արտադրողները չունեն հզորություններ՝ առկա պահանջարկն ամբողջությամբ ապահովելու: Ուստի նախարարությունը կհայտարարի բաց մրցույթ, որին հնարավորություն կունենան մասնակցելու բոլոր այն ընկերությունները, որոնք պատրաստ են պարարտանյութ ներմուծել կամ արտադրել: «Այժմ մշակում ենք մեխանիզմ, որի նպատակը պետք է լինի պարարտանյութերի շուկայի ձևավորումը, որպեսզի արտադրողները գտնեն իրենց գնորդին, դաշտը դառնա առավել մրցակցային, և պետությունը կարողանա բաց թողնել այս շուկան: Սա նաև կհանգեցնի պարարտանյութերի, այդ թվում՝ ներմուծվող արտադրանքի մրցակցային գնազույգմանը», - իր խոսքում նշել է գյուղատնտեսության նախարարը:

Աշխատակիցները նաև տեղեկացրել են, որ վերջին 10 տարիների ընթացքում կենտրոնում մշակվել է հակամիկրոբային պատրաստուկ, որը սալմոնելոզի դեպքում թոչնաբուծության և խոզաբուծության մեջ փոխարինում է կիրառվող հակաբիոտիկներին: Հանդիպման ավարտին՝ կենտրոնի աշխատակիցները նշել են, որ կներկայացնեն անհրաժեշտ բոլոր հիմնավորումները գնային առավելության մասին, իսկ նախարարը պատրաստակամություն է հայտնել քննարկել հարցը Հայաստանի թոչնաբույծների միության հետ:

ԿՈՈՊԵՐԱՅԻՆ

«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

2016թ. դեկտեմբերին «Շեն» ԲՀԿ-ն կազմակերպել էր «Գյուղատնտեսական կոոպերացիան Հայաստանում» թեմայով համաժողով՝ «Դյուղաբուծության ներառական արժեքի խթանումը Հայաստանում, Վրաստանում, Ղազախստանում և Մոլդովայում» տարածաշրջանային նախագծի շրջանակում:



Ծրագիրը ֆինասավորվում է Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD) կողմից և իրականացվում «ԱԳՐՈ-ինֆորմ» Մոլդովայի գյուղատնտեսական արտադրողների ազգային ֆեդերացիայի կողմից: Տեղական գործընկեր կազմակերպություններն են «Էկանա» օրգանական գյուղատնտեսության ասոցիացիան (Վրաստան), Ղազախստանի տնտեսագիտության, ագրոբիզնեսի և գյուղի զարգացման գիտահետազոտական ինստիտուտը, Մոլդովայի հանրապետության տնտեսական հետազոտություններ-

րի ազգային ինստիտուտը և «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպությունը:

Ծրագրի նպատակն է՝ բարելավել գյուղացիական փոքր տնտեսությունների եկամուտները՝ կոոպերացիայի զարգացման և արժեքի խթանումը դրանց արդյունավետ ներգրավման միջոցով: Համաժողովին մասնակցում էին՝ ԳԾԻԳ ՊՀ, ԱՄՔՈՐ հայկական մասնաճյուղի, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ), Վորլդ Վիժն Հայաստանի, Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) Հայաստանի մասնաճյուղի, «Սահման» ՀԿ, «Շեն» ԲՀԿ ներկայացուցիչներ և շահառու կոոպերատիվների վարչության անդամներ, նախագահներ:

Համաժողովի ընթացքում Շեն կազմակերպությունը ներկայացրեց դեռևս հուլիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում վերը նշված ծրագրի շրջանակում իրականացված «Գյուղատնտեսական արտադրողների միջև կոոպերացիան Հայաստանում» հետազոտության արդյունքները և կոոպերացիայի բնագավառում բացահայտված կարիքները:

- Գյուղատնտեսական կոոպերացիայի բազմաթիվ օգուտների շարքում հարցման մասնակիցներն առանձնացրել են հետևյալը՝
- Գյուղատնտեսությունից ստացվող եկամուտների աճ,
- Գիտելիքի և հմտությունների բարելավում
- Ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարելավում,
- Աշխատատեղերի ստեղծում,
- Ֆերմերների իրավունքների պաշտպանություն:

Հարցման արդյունքներն ի հայտ են բերել նաև որոշ խնդիրներ, մարտահրավերներ, որոնց լուծումը կարող է խթանել բարելավել կոոպերատիվների գործունեության արդյունավետությունն ու մրցունակությունը:

Այդ խնդիրների շարքում հարցմանը մասնակցած փորձագետներն առանձնացրել են «խորհրդային» կամ «կոլեկտիվ տնտեսության» մտածելակերպի փոփոխման և կոոպերատիվի կառավարման ժողովրդավարական սկզբունքների ներդրման անհրաժեշտությունը, կոոպերատիվների ֆինանսական կարողությունների ստեղծման կարևորությունն ու դոնորների երկարաժամկետ աջակցությունը: Հարցման մասնակիցները համակարծիք են այն հարցում, որ կոոպերատիվների գործունեությունը կարգավորող օրենսդրության հետագա բարեփոխումներն անհրաժեշտություն են:

Վերջին հարցին էր նվիրված «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» (ICARE) հիմնադրամի տնօրեն, «Շեն» ԲՀԿ ծրագրի փորձագետ Վարդան Ուռուտյանի «Գյուղատնտեսական և սպառողական կոոպերատիվների օրենսդրական բարեփոխումների առաջարկներ» թեմայով դասախոսությունը: Դասախոսությանը հաջորդեց ակտիվ քննարկում, որի ընթացքում ներկայացվեցին կարծիքներ՝ կոոպերատիվների գործունեության ընթացքում ի հայտ եկող իրավական խնդիրների վերաբերյալ:

«Շեն» կազմակերպությունը և համաժողովին ներկա կազմակերպությունների ներկայացուցիչները լիաժողով են, որ մոտ ապագայում կկատարվեն անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ կոոպերատիվների գործունեությունը կարգավորող դաշտում՝ խաղի կանոնների հստակեցման, կոոպերատիվների երկարաժամկետ գործունեությունն ապահովող նախադրյալների ստեղծման գծով: Կոոպերատիվների ներկայացուցիչներն իրենց հերթին ակնկալում են պետության աջակցությունը կոոպերատիվների խթանման քաղաքականության որոշեցման և պետական աջակցության՝ կոոպերատիվներին միտված կոնկրետ ծրագրերի իրագործման ուղղությամբ:

Նվարդ Շահմուրադյան
Շեն ԲՀԿ

ԾՐԱԳԻՐ

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԶԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Դեռևս 2016 թ. վերջերին CARD հիմնադրամում հյուրընկալվեց հոլանդական Դելֆի ընկերության ներկայացուցիչ՝ պարոն Սպեֆան Հենդրիքսը: Դելֆի ընկերության հետ համագործակցությունը մեկնարկել էր դեռևս 2014 թվականին՝ Նիդերլանդների կառավարության՝ EP Nuffic հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Ջերմասրնային մասնագիտացված մշակություն» ծրագրի շրջանակներում, որն ուղղված է CARD-ի և վերջինիս գործընկերների շրջանում գիտելիքների և հմտությունների զարգացմանն ագրոնոմիայի բնագավառում:

Ծրագրի առաջին փուլի արդյունքում մի շարք ագրոնոմներ հնարավորություն են ստացել վերապատրաստվելու՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ Հոլանդիայում: 2016 թվականի ապրիլից իրականացվում է ծրագրի երկրորդ փուլը, որի շրջանակներում շարունակվում է հատուկ CARD-ի կարիքներին և պահանջներին հարմարեցված դասընթացների իրականացումը՝ Դելֆի ընկերության հետ համատեղ:

Իր այցի շրջանակներում, պարոն Հենդրիքսը 2 դասընթաց է անցկացրել վարունգի և պղպեղի մշակության և բույսերի պաշտպանության թեմաներով: Առաջին դասընթացը նախատեսված էր Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսանողների, պրոֆեսիոնալ ագրոնոմների և CARD-ի մասնագետների համար, իսկ երկրորդ օրը լսարանը բաղկացած էր հիմնականում ջերմոցատերերից և բանջարեղեն մշակողներից: Դասընթացն անցել է բավականին ինտերակտիվ մթնոլորտում ներկաները փորձում էին ստանալ իրենց հուզող հարցերի պատասխանները՝ հարցադրումների և քննարկումների միջոցով:

Խիստ կարևորելով գործնական բաղադրիչը՝ Պարոն Հենդրիքսն այցելել



է վարունգի և պղպեղի ջերմասրենք՝ տեղում խնդիրների բացահայտման և խորհրդատվության տրամադրման նպատակով: CARD-ն արժևորում է Հոլանդիայի կառավարության կողմից տրամադրվող աջակցությունն ու ակնկալում, որ նմանատիպ ծրագրերի հարատևությունը կխթանի մեր երկրում ոլորտի զարգացմանը:

ԱՐԵՆԻՈՒՄ ԶԱՐԳԱՆԱԼՈՒ Է ՀՅՈՒՐԱՏՆԱՅԻՆ ԲԻԶՆԵՍԸ

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործադիր տնօրեն Լևոն Մնացականյանը, Վայոց ձոր կայարանի աշխատանքային այցի ընթացքում, մարզային մասնաճյուղի աշխատակազմին ներկայացրեց նորանշանակ տնօրեն Սուրեն Գասպարյանին:

Քննարկման ընթացքում որոշվեց ակտիվացնել գործակցությունը Վայքի քաղաքապետարանի, Վայոց ձորի մարզպետարանի հետ: Լևոն Մնացականյանը հորդորեց ավելի մեծ ուշադրություն դարձնել ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի առաջարկությանը՝ վերհանել և ներկայացնել մարզի տնտեսական զարգացմանն ուղղված ներդրումային գաղափարները: «Կարևոր է ուշադրություն դարձնել շահառու գործարարների մշտադիտարկման արդյունքներին», - ասել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի Գործադիր տնօրենը: Մասնաճյուղի տնօրենը գործադիր տնօրենի հետ քննարկեց նաև Վայոց ձորի գրասենյակի գործունեության զարգացմանն ուղղված հարցերը: Հանդիպմանը մասնակցում էին նաև Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և Հայաստանի միջազգային համագործակցության գործակալության (ՀՄՀԳ) համատեղ «Տեղական արտադրության զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջնորդում - փուլ 2» ծրագրի փորձագիտական խմբի ղեկավար Սենտ Ռյուիջին և ծրագրի համակարգող Գառնիկ Մանուկյանը: Սենտ Ռյուիջին գործնական խորհուրդներ տվեց գրասենյակի գործունեության արդյունավետության բարձրացման համար: Հանդիպման մասնակիցները Վայոց ձորի մարզային մասնաճյուղում քննարկեցին նաև գործարարների աջակցության համար նոր մեթոդներ մշակելու և ներմուծելու հարցերը: «Անցած 2 տարվա ընթացքում մարզում ավելացել են հյուրատները և չրագործական ձեռնարկությունները: Նաև աճել է գործարար համայնքի վստահությունը Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի նկատմամբ», - նշեց Սուրեն Գասպարյանը: Արենի համայնքի ղեկավար Րաֆֆի Խաչատրյանի հետ քննարկվեց համայնքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործունեությունն ու աջակցությունն ընդլայնելու ուղիները: Համայնքի ղեկավարը շնորհակալություն հայտնեց Արենիում արդեն իրականացված մի քանի ծրագրերի համար, որոնք ուղղված են եղել զբոսաշր-

ջության և գինեգործության զարգացմանը: Նա նաև շեշտել է, որ Արենիում խիստ զգացվում է հյուրատների կարիք: Անհրաժեշտ է նաև հիմնել տեղեկատվական կենտրոն, որը կծառայի զբոսաշրջիկների կարիքների բավարարմանը: «Մենք զբոսաշրջիկներին Արենիում պահելու խնդիր ունենք: Շատերը գալիս են, հիանում գյուղով, մասնակցում փառատոնին, բայց վերադառնում են Երևան կամ գնում Վայք», - նշել է համայնքի ղեկավարը:

«Արենի 1» գինետանը Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործադիր տնօրենի գլխավորած պատվիրակությունը հանդիպեց գինետան սեփականատեր Վարդան Սիմոնյանի հետ: Նա աջակցություն է ստացել ՓՄՁ ԶԱԿ-ի՝ «Սկսնակների ձեռներեցությանն աջակցություն ծրագրի» և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ու Հայաստանի միջազգային համագործակցության գործակալության (ՀՄՀԳ) համատեղ «Տեղական արտադրության զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջնորդում» ծրագրի առաջին փուլի շրջանակում: Գործադիր տնօրենի հետ քննարկվեց նաև գինետան զարգացման հեռանկարների, հնարավորությունների և նոր գաղափարների մասին:

ԿՈՈՊԵՐԱՅԻՆ

ԱՊԱԳԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻՆՆ Է

Գնել Մխիթարյանը, ով մասնագիտացել է ոչ ավանդական մշակաբույսերի արտադրության գծով (ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ), կողմնակից է կոոպերատիվների ձևավորմանը, քանի որ այն անհամեմատ ապահովագրված է ռիսկերից: Սակայն նրա կարծիքով՝ Հայաստանում պետք է ներդնել կոոպերատիվների ձևավորման հայկական մոդելը, որն էականորեն պետք է փարբերվի աշխարհի փարբեր երկրներում ստեղծված կոոպերատիվների մոդելից:

«Ես կողմնակից եմ աշխատավորական կոոպերատիվների ձևավորմանը: Հնարավոր եմ համարում մարդկանց ինտեգրումն ու համատեղ աշխատանքի կազմակերպումը: Սակայն շահույթը բաշխելու հարցում կարծում եմ մեզ մոտ դեռևս չի ձևավորվել այդ մշակույթը, որպեսզի կարողանանք ճիշտ տնօրինել այն», - ասում է Գնել Մխիթարյանը: Կոոպերատիվների ձևավորմանը խոչընդոտող գործոններից առաջինը, ըստ ֆերմերի, անվստահությունն է: Նրա կարծիքով՝ կոոպերատիվների ձևավորման հայկական տարբերակը սկզբունքորեն պետք է տարբերվի այլ երկրների կոոպերատիվներից՝ ելնելով մեր ազգային նկարագրից, բնակլիմայական պայմաններից և այլ առանձնահատկություններից:



«Կարծում եմ, մեզ մոտ կոոպերացիան ուրիշ հենքի վրա պետք է դրվի, Գերմանիայում, Իտալիայում և այլ երկրներում ձևավորված կոոպերատիվները նույնպես պետք է տարբերվեն հայկական մոդելից: Մենք պետք է ոչ թե արտերկրներում մշակված տեխնոլոգիան ներդնենք և փորձենք շրջանացնել, այլ ինքներս պետք է համախմբվենք և ստեղծենք մեր ազգային կոոպերացիան», - եզրահանգում է ֆերմերը, ապա հավելում, որ Ռաֆայելը, ով կոոպերացիայի հիմնադիրներից է, թեև Գերմանիայում ունեցել է կոոպերատիվների ձևավորման հաջող փորձ, այնուամենայնիվ, հաջողության է հասել՝ մի քանի անգամ ձախողվելուց հետո: «Այստեղից եզրահանգում ենք, որ չի կարելի նույն փորձն ամբողջությամբ տեղայնացնել Հայաստանի համար: Այսօր յուրաքանչյուրն աշխատում է առանձին, կղզիացած, չունեն հանրային մտածելակերպ: Սակայն մենք պետք է համախմբվենք և համատեղ աշխատելու վերաբերյալ որոշում կայացնենք: Ես այն կարծիքին չեմ, որ ամեն ինչ միանգամից հաջող ընթացք է ունենալու, կարող են լինել նաև դժվարություններ ու ծախսեր, սակայն լավատես եմ», - նշում է փորձառու մասնագետը:

Գնել Մխիթարյանի նախաձեռնությամբ ստեղծվել է «Աշտարակ» ֆերմերային խումբը և աշխատելով համատեղ՝ օրգանական գյուղատնտեսության զարգացման ծրագրեր են իրականացնում: Օրինակ՝ ներդրել են արդյունավետ միկրոօրգանիզմների օգտագործման տեխնոլոգիան, որը նորույթ է Հայաստանում: Խմբում ընդգրկված են տարբեր մասնագետներ, և յուրաքանչյուրը ներդրում է իր մասնագիտական կարողությունները, գիտելիքները, փորձն ու հմտությունը: Նպատակը՝ տնտեսության զարգացումն ու արդյունավետության բարձրացմանը նպաստելն է: Ծրագրել են նաև համատեղ կառուցել այլընտրանքային ջեռուցման աղբյուրով աշխատող ջերմոց: Չնայած դժվարություններին՝ ֆերմերը համոզված է, որ Հայաստանում ապագան կոոպերատիվներին է, և աշխատանքի ճիշտ կազմակերպման դեպքում կարելի է լուրջ հաջողության հասնել:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՁԿՆԱՐԱՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՄԱԼԻՐ ԼՈՒԾՈՒՄ ԵՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ

Ձկնարտադրության զարգացումը՝ ըստ «Հայ ձկնաբույծների միավորում» հասարակական կազմակերպության նախագահ Արմեն Բունիաթյանի, պայմանավորված է մի շարք գործոններով: Կազմակերպության ղեկավարն առաջնահերթ համարեց պետական աջակցության առկայությունը, մեծաքանակ արտահանման խթանումը, ինչպես նաև արտադրության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

«Հայկական ձկնամթերքն արդեն ճանաչում ունի ԵՏՄ երկրներում՝ իր որակական և համային հատկանիշների շնորհիվ: Ուստի, հնարավորինս պետք է, ստեղծել նպաստավոր պայմաններ՝ մեծաքանակ արտահանումը խթանելու նպատակով: Միանույն ժամանակ հնարավորություն կստեղծվի հայկական ձկնարդյունաբերության զարգացման համար, կընդլայնվեն տնտեսությունները», - ասում է Արմեն Բունիաթյանը, ապա հավելում, որ խոչընդոտներից մեկն էլ ջրի թանկ լինելու հանգամանքն է, ինչի հետևանքով որոշ տնտեսություններ նույնիսկ դադարեցրել են իրենց գործունեությունը: Արմեն Բունիաթյանը կարևորեց նաև սուբսիդավորված վարկավորման տրամադրումը տնտեսություններին, քանի որ տնտեսական ճգնաժամի հետևանքով առաջնահերթորեն տուժում են ձկնաբուծարանները: «Դրա հետևանքով վատանում է ձկնամթերքի իրացման գործընթացը, ինչն էլ պատճառ է դառնում արտադրանքի լճացմանը: Արդյունքում այն ուղղակիորեն հարվածում է տնտեսությանը, քանի որ ձկնաբուծարանները ստիպված արտադրանքը վաճառում են ինքնարժեքով, իսկ նման կերպ չեն կարող գոյատևել, դիմակայել առանց այդ էլ շատ դժվարություններ ունեցող տնտեսությունները», - հավելում է կազմակերպության նախագահը: Մինչդեռ դրա կողքին, ըստ պրն. Բունիաթյանի, տնտեսություններն ունեն հարկային պարտավորություններ, որոնք, անկախ ամեն ինչից, պետք է կատարեն ժամանակին: Նրա կարծիքով, դժվար է ցածր եկամտաբերություն ունեցող տնտեսությունների համար կատարել ծախսեր: Ըստ Արմեն Բունիաթյանի, ձկնաբուծությունը Հայաստանում կարող է առաջընթաց ունենալ, դրա վառ օրինակը վերջին 25 տարիներին ոլորտում տեղի ունեցող զարգացումներն են. ձևավորվեցին նոր տնտեսություններ, հները՝ կատարելագործվեցին: «Բարձրորակ, բնապահպանորեն մաքուր աճեցված ձուկը միշտ էլ պահանջարկ է ունեցել, և այն պետք է հասանելի լինի նույնիսկ աշխարհի ամենահեռավոր կետում պահանջարկ ունեցող սպառողի համար: Իսկ այսօր հայկական ձկնամթերքը, չնայած առկա պահանջարկին, նույնիսկ չենք կարող արտահանել եվրոպա: Դրա համար դարձյալ առկա է պետական մշտական աջակցության անհրաժեշտությունը: Ձկնաբույծները պատրաստ են ընդլայնելու տեսականին, զարգացնելու ձկնամթերքի արտադրությունը», - իր խոսքը եզրափակում է Արմեն Բունիաթյանը:



ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՆԱՅԷ

ԿԱՄԵՑՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՄՔԸ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄ ԵՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Ավարդ Դավոյանը ներկայացնում է ՀՀ Լոռու մարզի Վարդաբլուր համայնքում ձևավորված կանանց խումբը: Այն կազմավորվել է Եվրամիության ENPARD ծրագրի շրջանակներում: Կանայք զբաղվում են ոչ ավանդական մշակաբույսերի արտադրությամբ:

Գյուղատնտեսական աշխատանքներում ընդգրկված են հինգ կանայք՝ իրենց ընտանիքներով: «Տարածաշրջանում հիմնականում արտադրում են կարտոֆիլ և հացահատիկային մշակաբույսեր: Սակայն մենք որոշեցինք «խախտել» ավանդույթը և կազմակերպել ոչ ավանդական մշակաբույսերի արտադրություն, քանի որ գնալով մեծանում է վերջիններիս պահանջարկը և կիրառությունը: Արտադրում ենք բրոկկոլի, որի մշակության աշխատանքները հեշտ են, արտադրանքի արժեքը՝ բարձր», - պատմում է կանանց խմբի ներկայացուցիչ Ավարդ Դավոյանը:

Ուշագրավն այն է, որ տարածաշրջանի բնակլիմայական պայմանները նպաստավոր են յուրօրինակ այս մշակաբույսի աճեցման համար, ինչի շնորհիվ այն բավականին բարձր բերք է ապահովում: Մասնագիտական խորհրդատվությունը ստանում են «Կանաչ արահետ» հասարակական կազմակերպությունից: Այդ նպատակով կազմակերպվել են ուսուցողական դասընթացներ, կազմակերպությունը հետևում է նաև մշակության հետագա աշխատանքներին, իսկ բերքի իրացման նպատակով կազմակերպում է նաև ցուցահանդեսներ: Սերմերը տրամադրել է ENPARD ծրագիրը, իսկ նախքան այդ, փորձնական ցանքեր կատարելու նպատակով՝ «Կանաչ արահետ» և «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպությունները: Ի դեպ, կանայք փորձել են ոչ ավանական մշակաբույսերից պատրաստել նաև պահածոներ և մարինադներ, որոնք աչքի են ընկնում թե՛ համային հատկանիշներով, և թե՛ գրավիչ տեսքով: Ուշագրավն այն է, որ բաղադրատոմսերը կազմվում են կանանց, մասնավորապես՝ Ավարդ Դավոյանի մտահաղացումներով: Մասնագիտությամբ սոցիոլոգ Ավարդ Դավոյանը, ով զուգահեռաբար աշխատում է նաև մասնագիտությամբ, ուսուցողական սեմինարների միջոցով ավելի է խորացնում գյուղատնտեսական գիտելիքները, կատարելագործում դրանց կիրառումն արտադրության մեջ: Գործարար կինը միաժամանակ վարում է նաև ջերմոցային տնտեսություն, աճեցնում է բանջարանոցային մշակաբույսեր՝ լոլիկ, վարունգ, պղպեղ, ինչպես նաև սածիլներ: «Դժվարությամբ, սակայն կարողանում եմ համատեղել թե՛ բոլոր աշխատանքները, և թե՛ ընտանեկան հոգսերը: Կարևորը կամեցողությունն ու կամքն է, որոնք հաղթահարում են բոլոր դժվարությունները», - ասում է Ավարդն ու ավելացնում, որ առջևում դեռ շատ ծրագրեր կան, որոնք սպասում են իրականացման: Ինչ վերաբերում է կանանց խմբին, ապա այդպիսով ձևավորվում է կոոպերատիվ տնտեսություն, որի պարագայում, ըստ տիկին Դավոյանի, կզարգանա, կնդլայնվի արտադրությունն ու տեսականին:

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՆՅՈՒՔԱՍԼՅԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Նյութալյան հիվանդությունը (լատիներեն - Morbus Newcastl, անգլերեն- Newcastl disease, болезнь Ньюкасла, կեղծ ժանրախար, արիպիկ ժանրախար, սախական ժանրախար, պսևդոէնցեֆալոմիելիտ, Դոյլի, Ֆիլարերի, Բանիսերի և այլն) հավազգիների խիստ հալավարակային վիրուսային հիվանդություն է, որը բնորոշ է շնչառական օրգանների, սրամորսաաղիքային և կենտրոնական նյարդային համակարգի ախտահարումներով:

Պատմական տվյալներն և տարածվածությունը: Հիվանդությունն առաջին անգամ արձանագրվել է 1926թ. 'Յավա կղզում, այնուհետև լայն տարածում գտավ ասիական, ամերիկական և եվրոպական շատ երկրներում: Անգլիացի հետազոտող Դոյլը 1927 թ., այդ հիվանդությունը նկատում է Նուբասլ քաղաքի մոտակայքում և անվանում է բնակավայրի անունով, իսկ 1935 թ. Գերմանիայում այն անվանվել է ճուրի պնևմոէնցեֆալիտ: Հիվանդությունը զգալի տարածում ունի նաև Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև հարևան պետություններում, որն էլ մեծ տնտեսական վնասներ է հասցնում թռչնաբուծական տնտեսություններին:

Հարուցիչ էթիոլոգիան: Հարուցիչը՝ ՌՆԹ պարունակող, 120-380 նմ մեծության Paramixovirus-ների սեռին և Paramixoviridae (para-մոտ, mixo-լործ) ընտանիքին պատկանող քամկող վիրուս է: Այն բազմատրոպ է. տեղակայվում է շնչառական, մարտղական և նյարդային համակարգերում:

Վիրուսը կազմված է ռիբոնուկլեոպրոտիդից (RNP), հեմագլյուտինից (V-հակաձին), ֆերմենտից (նեյրոամինոպրոպիլիդազ, հեմոլիզինից, լիպիդից և ածխաջրածնից: Այն օժտված է հեմագլյուտինացման հատկությամբ, ստանձնվում է ծովախոզուկների և հնդկահավերի էրիթրոցիտներին, որն օգտագործվում է հեմագլյուտինացիայի կասեցման ռեակցիայով վիրուսի տարբերակման համար: Վիրուսն ակտիվորեն վերարտադրվում է 9-12 օրական հավի սաղմում և խորիոնալանթոխում, ամնոտիկ թաղանթում, որտեղ կուտակվում է 10^{-7} - 10^{-9} սաղմնային վարակային տիտրով վիրուս, որի հեմագլյուտինացիայի տիտրը կազմում է 1:20-1:2000: Այն հյուսվածքային աճեցվածքներում առաջացնում է արտահայտված բջջաախտաբանական փոփոխություններ:

Հակաձին նկատմամբ թռչունների օրգանիզմում առաջանում են վիրուս չեզոքացնող, կոմպլեմենտ կապող, պրեցիպիտացնող հակամարմիններ և հակահեմագլյուտինիններ:

Նուբասլյան հիվանդության հարուցիչը թռչնանոցներում շրջանառվում է 3 ձևով. լանտոգ շտամը (թույլ ախտածին) հանդիպում է հավերի, ֆագանների, խայտահավերի ճուրի մոտ, մեզոգենը՝ (միջին ախտածին) 25-30 օրական ճուրի մոտ, վելոգենը՝ բարձր ախտածնությամբ համաճարակային շտամ է, որը ախտածին է բոլոր հասակային խմբերի թռչունների համար:

Կայունությունը: Հիվանդության հարուցիչը զգայունակ է ջերմության, ախտահանիչ նյութերի, էֆիրի, քլորոֆորմի նկատմամբ: Վիրուսը կայուն է pH 2,0-10,0 սահմաններում: Չորացած թռչունների օրգաններում, ոսկրածուծում, հարուցիչը, 7-18 °C պայմաններում, իր ակտիվությունը 1 պահպանում է 2 տարի, ձմռանը՝ 140 օր, ամռանը՝ 7 օր, իսկ նեկվոդ դիակում 3 շաբաթ: Մառեցված հավի մետղիքում պահպանվում

է 800 օր և ավել: Վիրուսով վարակված մետղիքը անվտանգ է դառնում 40-60 րոպե եփվելու դեպքում: Թչնաղբում կենսաբանական պրոցեսների ժամանակ վիրուսն ակտիվագրվում է 20 րոպեի ընթացքում, 2 %-ոց ֆորմալդեհիդի (CH_2O), կծու նատրիումի (NaOH) և քլորակալի $\text{Ca}(\text{OCl})_2$ 3% ակտիվ քլոր պարունակող լուծույթներում:


Համաճարակաբանական տվյալները: Նյութալյան հիվանդության նկատմամբ բնական պայմաններում ընկալունակ են տարբեր հասակի հավազգիները (հավեր, հնդկահավեր, խայտահավեր, փասիաններ, սիրամարգեր): Համաճարակի դեպքեր են գրանցվել նաև սինանտրոպ (աղավիսներ, թուրթակներ) թռչունների և ճնդուկների, սարյակների, բազենների մոտ, որոնք շփման մեջ են գտնվել հիվանդ թռչունների հետ: Բաղերն ու սագերն ընկալունակ չեն և համարվում են հիվանդության հարուցիչ փոխանցողներ:

Հիվանդության հարուցիչ աղբյուր են համարվում կլինիկապես հիվանդ, վարակակիր, հիվանդացած և առողջացած թռչունները, որոնք ախտածին հարուցիչն արտազատում են տարբեր ուղիներով՝ ձվի, փետուրի, բմբուլի, կղանքի, արցունքահոսի, քթի ու բերանի լորձափողից և այլ արտազատուկներով միջոցով, այդպիսով ախտահարելով կերը, ջուրը, խնամքի առարկաներն ու շրջակա միջավայրը: Վիրուսն օրգանիզմ է ներթափանցվում ալիմենտար, շնչառական ճանապարհներով և ամբողջականությունը խախտված մաշկի միջոցով: Հիվանդացած, առողջացած թռչունների մանրէակրությունը պահպանվում է մինչև 2-4 ամիս:

Վարակումից 24 ժամ հետո հիվանդության հարուցիչն արտազատվում է արտաքին միջավայր, որն էլ քամու միջոցով կարող է տարածվել 3-5 կմ հեռավորության վրա: Նյութալյան հիվանդությունը կարող է մարդկանց մոտ առաջացնել մեղմ ընթացքով, ինքնասահմանափակվող կոնյուկտիվիտ և մարդուց մարդ չի փոխանցվում:

Հիվանդության հարուցիչ փոխանցման գործոնները բազմազան են: Դրանց են վերաբերում կենդանի և անկենդան նյութի բազմաթիվ տեսակները՝ վարակակիր չվող ջրային թռչունների արտաթորանքը, ախտահարված ջուրը, կերը, հագուստը, ձուն, կեղևը, փետուրը, բմբուլը, ցամքաբը, հարկաղիք մորթված թռչունների մետղիքը, ներքին օրգանները, արյունը, դիակները և Argas persicus տիգը, որի օրգանիզմում վիրուսը կարող է պահպանվել մինչև 213 օր: Ձվի կեղևում վիրուսը պահպանվում 1-2 շաբաթ: Ճտհանության ժամանակ վարակված սաղմը մահանում է 2-4 օրվա ընթացքում:

Հիվանդությունը հաճախ ընթանում է համաճարակի ձևով և ունենում է մնայուն բնույթ, որը կապված է արտաքին միջավայրի, սեզոնայնության և տեղերի մանրէակրության հետ (գծ. 1): Համաճարակի ինտենսիվությունը հասնում է 80-100 %, իսկ անկումները 47-90



%:

Ախտածնությունը: Հիվանդության հարուցիչը տարբեր ճանապարհներով թափանցելով թռչունների օրգանիզմ, և 20-24 ժամվա ընթացքում հայտնվելով արյան մեջ, այնուհետև կլանվելով էրիթրոցիտների կողմից և տարածվելով ամբողջ օրգանիզմում, ախտահարում է կենտրոնական նյարդային, ինչպես նաև մարտղական և շնչառական համակարգերը: Վիրուսի բազմացման հետևանքով խախտվում է արյան մազանոթների թափանցելիությունը և անոթի պատի ամբողջականությունը, որի հետևանքով առաջանում են զանգվածային արյունազեղումներ շնային և լորձային ծածկոցների վրա:

Ընթացքը և կլինիկական նշանները: Վարակվելուց անմիջապես



Նկ 1. Բերանի լորձաթաղանթի դիֆտերիկ (լորանման) ախտահարում:


հետո հիվանդության նշանները չեն դրսևորվում, քանի որ հիվանդությունն ըստ բնույթի ընթանում է գերսուր (կայծակնային), սուր, ենթասուր, քրոնիկ, տիպիկ և ատիպիկ ձևերով:

Սուր ձևի դեպքում հիվանդության զաղտնի շրջանը տևում 1-4 օր, ենթասուրի դեպքում՝ 7-10 օր, իսկ քրոնիկի դեպքում՝ 2-3 շաբաթ: Վարակը թռչնանոցներում տարածվում է շատ արագ, կորուստը երբեմն հասնում է 95-100 %: Հիվանդության զաղտնի շրջանի տևողությունը տատանվում է 2-18 օրերի ընթացքում, այն պայմանավորված է հարուցիչ թափանցման ուղիներից, դրա վարակունակությունից, թռչունների պահվածքից, տեսակից և հասակից: Գերսուր ձևը դրսևորվում է ոչ յուրահատուկ կլինիկական նշանների

և թռչունների զանգվածային անկումներով: Սուր ընթացքի դեպքում թռչունները թմբած են, հաճախ նստում կամ տնական ժամանակ կանգնում են փակ աչքերով, կտուցը գետնին հենած: Քթից և բերանից հոսում է առատ լորձուք: Հիվանդությունը տևում է 1-3 օր:

Սուր կամ տիպիկ ձևին բնորոշ է մարմնի ջերմաստիճանի բարձրացում

43-44 °C, հիվանդ թռչունները կորցնում են ախորժակը, հրաժարվում են կերից, լինում են թուլացած, քնկոտ և կորցնում են կողմնորոշվելու ընդունակությունը: Փետուրները գունաթափ, խճճված, կատարը, գինդերն ու մաշկը կապույտ գույնի են, նկատվում է արյունալորձային կամ կանաչ գույնի փորլուծ: Հիվանդների 40-70 %-ի կտնառքը լայնացած, բորբոքված է՝ լցված պղտոր, տհաճ հոտ ունեցող հեղուկով: Հիվանդ թռչունների պարանոցը ոլորվում է, գլուխը հետ են գցում, հաճախ կատարում շրջանաձև պտույտներ, իսկ բերանը բաց վիճակում է, որից հոսում է անդուր հոտով հեղուկ՝ խառնված արյան, լորձի և լեղու հետ: Միևնույն ժամանակ նկատվում է աչքերի շողկապնեու թարախային բորբոքում (կոնյուկտիվիտ), այտուցվածություն ու կարմրություն: Շնչառությունը դժվարացած է և արագացած, հաճախ հագում են ու փռչում, որոնցով ցանկանում են ազատվել շնչափողում կուտակված էքսուդատից: Շնչում են բաց բերանով և արձակում անբնական



Նկ. 2. Խոցեր բերանի լորձաթաղանթի վրա:

ձայներ: Մարտղական համակարգի ախտահարման ժամանակ հիվանդների 80-90 %-ի մոտ նկատվում է փորլուծ, հաճախ սպիտակակախաչավուն գույնի, երբեմն էլ արյունային խառնուրդով: Անկումները կազմում են 90 %:

Ենթասուր ընթացքին բնորոշ է վարակված թռչունների վերջույթների նյարդային խանգարումները և բերանի լորձաթաղանթի մռուկային խոցերի առաջացումը (նկ. 1, 2):

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ


6

ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՅՈՒՔԱՍԼՅԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Քրոնիկականի դեպքում գրեթե նույն նշաններն են, սակայն ավելի երկարատև ժամանակով:

Ատիպիկ ձևով հիվանդանում են լիատարիք թռչունները, այս դեպքում նկատվելի են կարճատև ընկճվածություն, ռինիտ և ձվատվության նվազում:

Ախտաբանաանատոմիական փոփոխությունները: Հիվանդության ամենաբնորոշ նշան են համարվում մկանային և գեղձային ստամոքսի անցման հատվածի, կույր աղիի լորձաթա-



Նկ. 3. Կետային արյունազեղում գեղձային ստամոքսի լորձաթաղանթում:



Նկ. 4. Տասներկումատնյա աղիքի արյունահոսային բորբոքում:



Նկ. 5. Կլոակայի լորձաթաղանթի արյունահոսային բորբոքում:



Նկ. 6. Նյուքասլյան հիվանդությունից անկաժ թռչունի ախտահարված գեղձային, մկանային ստամոքսը, շնչափողը, կույր և բարակ աղիները:

ղանթի, սրտի նախափորքի և փորքի միացման մասում բազմաօջախային արյունազեղումները: Արյունահոսային բորբոքում է դիտվում նաև բարակ և ուղիղ աղիների, ինչպես նաև կոյանցքի լորձաթաղանթներում (նկ. 3, 4, 5, 6): Նշենք, որ կույր եղունի հիմքում արյունազեղումը կազմում է 100 %, իսկ տասներկումատնյա աղիքի առաջնային մասում՝ 72 %:

Ախտորոշումը: Համաճարակաբանական, կլինիկական, ախտաբանաանատոմիական, սրբինիզ թեստի (կիրառվում է կլինիկայես առողջ

առանձնյակների նկատմամբ՝ հիվանդությունը հայտնաբերելու նպատակով, ենթակլինիկական դեպքերի հայտնաբերման համար, շիճուկաբանական (հեմագլյոտինացման կասեցման և չեզոքացման ռեակցիաներով), իմունա-կենսաբանական, իմունֆերմենտատիվ անալիզի (ELISA) պոլիմերաշղթայական ռեակցիայի (ՊՇՌ) միջոցով: Նյուքասլյան հիվանդության վիրուսի փորձաքննության համար անհրաժեշտ է քսուքներ վերցնել քթանցքերից, բերանի խոռոչից և կլոակայից:

Լաբորատոր հետազոտությունների համար՝ որպես առաջնային նյութ է համարվում սատկած թռչունների գլխուղեղը, շնչուղիների պարունակյալն, արյունը, լյարդը և փայծաղը:

Տարբերակիչ ախտորոշումը: Նյուքասլյան հիվանդությունը պետք է տարբերակել գրիպից, ինֆեկցիոն լարինգոտրախեիտից, ինֆեկցիոն բրոնխիտից, սինուսիտից, պաստերելյոզից, սպերոխետոզից, ռեսպիրատոր միկոպլազմոզից, կոկցիդիոզից և կերային թունավորումներից: Բուժումն անարդյունավետ է:

Իմունիտետ: Հիվանդացած առողջացած, ինչպես նաև պատվաստված թռչունների արյան շիճուկում առաջանում են առանձնահատուկ, անընկալունակությունը պայմանավորող հակամարմիններ, որոնց քանակը կախված է իմունացված թռչունների հասակից, պատվաստանյութերի ներարկման ուղիներից:

Հարկ է նշել, որ հիվանդացած առողջացած թռչունները ձեռք են բերում վարակամեծում՝ 6-8 ամիս տևողությամբ: Իմունացման նպատակով օգտագործվում են հեղուկ և B₁ La-Sota, Bop-74, H շտամներից պատրաստված չոր վիրուսային պատվաստանյութեր: Պատվաստման ժամկետները որոշվում են ըստ իմունիտետի լարվածության վիճակի: Իմունիտետի լարվածությունը որոշվում է հետպատվաստման 15-20-րդ օրերին, այսինքն արյան շիճուկում որոշում են հակամարմինների քանակությունը հեմագլյոտինացման կասեցման ռեակցիայի միջոցով: Յուրաքանչյուր խմբի թռչուններից վերցնում են արյան 25-30 նմուշ, եթե հետազոտվող արյան 20 % և ավելի դեպքում արյան շիճուկի տիտրը 1:8-ից ցածր է, հետևաբար իմունիտետի լարվածությունը թույլ է, ապա անհրաժեշտ է կատարել վերապատվաստում:

Պատվաստանյութերն օրգանիզմ են ներմուծվում ներմկանային, ներքթային, ներքին, աներոզուլային եղանակներով:

Սպառնալիքի ենթակա տնտեսություններում լիատարիք թռչուններին ձվատվության շրջանում իմունացնում են միանվազ՝ ներարկելով պատվաստանյութը կրծի մկանի մեջ 1 մլ չափաքանակով, հնդկահավերինը՝ 2-3 մլ: Մինչև 2 ամսական ճտերին պատվաստում են երկնվազ՝ 7-10 օր ընդմիջումով՝ 0.5 մլ, 2 ամսականից հետո՝ 1մլ չափաքանակով: Անապահով տնտեսություններում ակտիվ իմունացնում են տարին մեկ անգամ՝ օգտագործելով վիրուսային կամ սաղմնային հիդրօքսիդայումինա-ֆորմալինային պատվաստանյութերը (նկ. 7, 8):

Լիատարիք թռչունների իմունիտետը պահպանվում է 10-12 ամիս, իսկ սաղմնային պատվաստանյութով մշակված մատղաշներինը՝ 3 ամիս:

Կանխարգելումը և պայքարի միջոցառումները: Նյուքասլյան հիվանդության դեմ պայքարի ամենաարմատական միջոցառումը հակաժանտախտային պատվաստանյութով նախագուշակյան պատվաստումն է, որը ժամանակին և ժիշտ կիրառելու դեպքում, լիովին ապահովվում է այդ հիվանդության կանխարգելումը: Նյուքասլյան հիվանդության ախտորոշումից հետո



Նկ. 7. Բիովակ պատվաստանյութ



Նկ. 8 Պատվաստում ներկծամկանային եղանակով:

տվյալ տնտեսությունն և տարածաշրջանը համարվում է անապահով և սահմանվում է կարանտին համապատաս-

խան մարմինների կողմից: Կարանտինի ընթացքում արգելվում է կողմնակի անձանց մուտքն ու ելքը, թռչունների ցուցահանդեսը, վաճառքը, փոխանակումը: Անապահով թռչնասնոցների հիվանդ ու թույլ թռչուններին ոչնչացնում են անարյուն եղանակով և այրում, իսկ կլինիկայես առողջներին սպանդի են ենթարկում և մսեղիքն օգտագործում ջերմային մշակումից հետո: Դրանց բմբուկները, փետուրները, եղունգները, օգտագործվող առարկաներն ախտահանում են 3-4 %-ոց և ֆորմալդեհիդի և քլորակրի ջրային լուծույթով, 25-30 րոպե տևողությամբ, ցածրորակ գույքը այրում են, իսկ արժեքավոր գույքը վարակազերծում 1,5 % կծու նատրիումի, 3 %-ոց ակտիվ քլոր պարունակող քլորակրի, 5%-ոց կրեոլինի լուծույթներով:

Անապահով և սպառնալիքի ենթակա տնտեսության, ինչպես նաև անհատական օգտագործման առողջ թռչուններին, որտեղ չի արձանագրվել հիվանդություն, ենթարկում են հակաժանտախտային պատվաստման: Անապահով տնտեսության թռչնաղբն այրում են, իսկ պայմանական առողջներինը ենթարկում կենսաջերմային վարակազերծման:

Կարանտինը անապահով տնտեսություններից հանվում նյուքասլյան հիվանդության նկատմամբ սպառնալիքի ենթակա թռչուններին հարկադիր սպանդի ենթարկելուց և եզրափակիչ առահանությունից 1 ամիս հետո, իսկ սահմանափակումները՝ 6 ամիս հետո:

Մարիամ Սարգսյան /ՀԱԱՀ/

ԱՅԳԵԳՈՐԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԳԱՄԿՈՒՄ

Գեղարքունիքի ԳԱՄԿ-ում տեղի ունեցավ «Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղի զարգացման ծրագիր» /ԵՀԳԳԶԾ/ENPARD/ ծրագրի շրջանակներում իրականացվող «Տեխնիկական օժանդակություն ՀՀ գյուղատնտեսությանը» սեմինար-դասընթաց՝ բույսերի պաշտպանության և անասնապահության վերաբերյալ:



«Կարտոֆիլի և լոլիկի ցեց» թեմայով դասընթացը վարում էր ՀԱԱՀ Այգեպոլիտնության և բույսերի պաշտպանության ամբիոնի վարիչ, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմենակ Տեր-Գրիգորյանը: Դասընթացի ընթացքում ներկայացվեց ցեցի տարածման, վարակման, պայքարի քիմիական և կենսաբանական միջոցառումների մասին: «Նախրի ձևավորումը» թեմայով դասընթացը վարում էր գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀԱԱՀ մասնավոր անասնաբուծության ամբիոնի վարիչ Տիգրան Զիթյանը: Նա մանրամասն բացատրեց ինչպես ճիշտ կազմակերպել և ձևավորել առողջ նախիր: Սեմինարի ընթացքում ցուցադրվեցին թեմաների վերաբերյալ տեսահոլովակներ:

Դասընթացի մասնակիցներն իրենց գոհունակությունն ու շնորհակալությունը հայտնեցին սեմինարի կազմակերպիչներից և ցանկություն հայտնեցին, որ հաճախակի կազմակերպվեն նմանատիպ հանդիպումներ: Սեմինարի ավարտին մասնակիցները լրացրեցին գնահատման թերթիկներ, իսկ ուսուցանողները պատասխանեցին մասնակիցներին հետաքրքրող հարցերին:

Գեղարքունիքի ԳԱՄԿ

ՀԵՏԱԲՈՒԹՅՈՒՆ...

ԱՐԵՎԱԴԱՐՁԱՅԻՆ ՄՐՔԵՐ

Եթե ճանապարհորդենք էկզոտիկ երկրներ, ապա կարելի է հանդիպել շաքարոտի հետաքրքիր մրգերի, բանջարեղենների. դրանցից մեկը՝ լիչին է:

Այն արևադարձային և ենթարևադարձային, Չինաստանի Գուանգդոնգ և Ֆուջիան մարզերի էնդեմիկ մրգատու ծառ է, այժմ մշակվում է մերձարևադարձային բոլոր երկրներում: Թարմ պտուղն ունի քնքուշ, սպիտակաման պտղամիս՝ ծաղկային բուրմունքով և գեղաբույր, քաղցր համով: Միրգը սովորաբար ուտվում է թարմ վիճակում, քանի որ անուշահոտ համը կորչում է պահածոյացման ընթացքում:

Որպես 10-28 մետր երկարությամբ մշտադալար ծառ՝ լիչին տալիս է պարարտ և հյութեղ պտուղներ, որոնց երկարությունն ու լայնությունը հասնում են մինչև 4-5 սմ, մոտ 20 գ: Մրգի արտաքին մասը պատված է վարդագույնակարմիր, կոպիտ կեղևով, որն ուտելի չէ, բայց հեշտությամբ մաքրվում է, որտեղից երևում է քաղցր, կիսաթափանցիկ սպիտակ պտղամիսը:



Հին չինացիները լիչին օգտագործել են սննդի մեջ՝ դեռևս մ.թ.ա. 2-րդ դարում: Գոյություն ունի լեգենդ, համաձայն որի, չինական կայսր Ու Դին, բարկացած լինելով այն հանգամանքի վրա, որ չի հաջողվում այս բույսի մշակությունը՝ հարավային Չինաստանից տեղափոխել Հյուսիսային Չինաստան, մահապատժի է ենթարկել իր բոլոր այգեպաններին: Ժամանակի ընթացքում այս բույսը սկսեցին մշակել նաև հարևան երկրներում: Այսօր լիչին ամենահայտնի մրգերից մեկն է հարավ-արևելյան Ասիայում: Եվրոպական առաջին հիշատակությունները լիչինի մասին փոխանցվել են 17-րդ դարի կեսերից: Խու-

լան Գոնսալես դե Մենդոզան, ում շնորհիվ լիչին սկսեցին անվանել «չինական սալոր», գրել է, որ այս միրգը հիշեցնում է սալորի, որը երբեք չի ծանրաբեռնում ստամոքսը և հնարավոր է ուտել մեծ քանակությամբ:

Լիչինի պտուղներն օգտագործվում են սննդի մեջ, թարմ վիճակում. դրանից պատրաստում են քաղցր ուտեստներ՝ դոնդոլ, պաղպաղակ և այլն: Շաքարով պահածոյացված պտուղներն առանց կաշվի, արտահանվում են բազմաթիվ երկրներ: Պտուղներն օգտագործվում են նույնիսկ ավանդական չինական գինու արտադրության մեջ: Դրանք երբեմն չորացնում են ամբողջությամբ, կեղևը դառնում է ավելի կոշտ: Այդպիսի չորացրած մրգերը կոչվում է «լիչինի ընկույզ»:

Միրգը պարունակում է մի շարք ածխաջրեր, պեկտին, կալիում, մագնեզիում և վիտամին C: Ամենակարևորն այն է, որ այն պարունակում է մեծ քանակությամբ նիկոտինային թթու, որն ակտիվորեն խոչընդոտում է աթերոսկլերոզի զարգացմանը: Մրգի չափավոր օգտագործումն օգնում է հազի բուժմանը և ունի բարենպաստ ազդեցություն ուռուցքների բժշկման համար: Չինաստանում լիչինի սերմը օգտագործում են որպես ցավազրկող միջոց, փոշու տեսքով այն օգտագործվում են նաև աղիների խնդիրների լուծման նպատակով:

Լիչին աճում է նաև չոր մերձարևադարձային կլիմայում, համեմատաբար սառը ձմռանը: Ծառը շատ դանդաղ է աճում, բերքը հավաքում են մայիս – հունիս ամիսներին: Տարվա մնացած ժամանակահատվածում միրգը չի հանդիպում: Լիչին հեշտությամբ աճեցվում է տնային պայմաններում, կիսամութ տարածքում: Համը շատ հյութալի է, քաղցր: Մի փոքր թթվայնություն ունեցող պտուղներն ունեն տոնիկ ազդեցություն, հասած լիչինի պտուղները կարելի է պահել սառնարանում ոչ ավելի, քան երկու շաբաթ: Պահածոյացվում է կամ իր իսկ հյութով կամ կոկոսի:

Սառեցված պտուղները կարելի է պահել մինչև 3 շաբաթ: Պտուղը քաղում են ամբողջ տերևներով հանդերձ: Օպտիմալ ջերմաստիճանը փոխադրման համար պետք է լինի ոչ պակաս, քան՝ 1 °C և ոչ ավել քան 6 °C: Այդպիսի պայմաններում պտուղները կարող են դիմանալ մինչև 1 ամիս, իսկ արդեն սենյակային ջերմաստիճանում սկսում են փչանալ մի քանի օր հետո: Լիչին ավելի օգտակար է ուտել անմիջապես գնելուց հետո, քանի որ մի քանի օր հետո այն կորցնում է իր օգտակար հատկությունները: Չնայած լիչին հիմնականում քաղցրահամ միրգ է, սակայն այն նաև կարելի է համեմել ձկան և մսի և հավի հետ:

Կիրառելի է նաև աղցաններում:

Գուավան ցածր կալորիականություն ունեցող մթերք է, այն համարվում է վիրամիտ C-ի պահեստ, նաև պարունակում է բջջանյութ, կալիում, ինչպես նաև վիրամիտ A:



Շատ երկրներում այս միրգն ուտում են հում վիճակում, ինչպես, օրինակ, խնձորը, սակայն կան երկրներ, որտեղ միրգը համեմուն են աղով, պղպեղով կամ համեմունքների որևէ խառնուրդով: Այս մրգից պատրաստում են հյութեր, աղանդեր, նաև օգտագործվում է խոհարարության մեջ: Պեկտին նյութի բարձր պարունակության շնորհիվ է, որ սրանից նաև դոնդոլ, ջեմ, մուրաբա և այլ քաղցրավենիքներ են պատրաստում: Իսկ քանի որ կեղևի մեջ վիտամին C-ի պարունակությունը մի քանի անգամ ավելի բարձր է, քան՝ հենց մրգի մեջ, խորհուրդ է տրվում այն օգտագործել ամբողջությամբ՝ չհեռացնելով կեղևը:

Օգտակար հատկությունները: Այս մրգի օգտագործումը գրեթե անխոցելի է դարձնում հաստ աղին՝ պաշտպանելով այն վնասակար նյութերից: Այն հակաօքսիդանտների և վիտամինների հրաշալի աղբյուր է, օգտակար է նաև արյան, ինչպես նաև մաշկի համար: Այս մրգի օգտագործումը ոչ միայն նպաստում է մաշկի լավ որակին, այլ նաև պաշտպանում է այն ուլտրամանուշակագույն ճառագայթներից՝ հեռուսպես չեզոքացնելով շագանակագեղձի քաղցկեղի վտանգը:

Լիլիթ Գասպարյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍԿՍՎԵԼ Է 2017 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«ԱԳՐՈՐԱՏՈՒ» թերթ

1 համարի գինը՝ 120 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 տարվանը՝ 3960 դրամ

«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագիր

1 համարի գինը՝ 1350 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 տարվանը՝ 8100 դրամ

Ըաժանորդագրությունը իրականացնում են՝

- ✓ Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները
- ✓ «Դաշնություն»
- ✓ «Դաշնամուկ»
- ✓ «Պրեմ-Անտաշե»

կազմակերպությունները



Հարգելի քաղաքացիներ,

Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք զանգահարել 011 52 48 34 հեռախոսահամարով:

Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ «Նոյան Տապան» և «Բուկինիստ» գրատներում:



ԱԳՐԱԼԵՐԱՌ
AGRONEWS

Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ

Տնօրեն

Գլխավոր խմբագիր և
համարի պատասխանատու՝

Ա. ՎԱՀՄՅԱՆ

Լ. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ՝000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 2
ստորագրված է տպագրության 06.02.2017 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Մամիկոնյանց 39ա